«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»
«ԿԱՄՈՒՐՋ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի
խորհրդի 2022թ-ի նոյեմբերի 24-ի որոշմամբ
/արձանագրություն N 24/22/
(ուժի մեջ է 24.11.2022թ.-ից)
խորհրդի նախագահ
Գագիկ Պողոսյան

# ԳՐԱՎՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

## 1. ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԵՐ

### 1.1. «ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՎՎԿ ՓԲԸ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ (NMC) (ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿ ՆՈՐ ՏՈՒՆ)[1]

| Դրույթներ | Պայմաններ | |
|---|---|---|
| Վարկառուներ | ՀՀ քաղաքացի և ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձիք | |
| Վարկի նպատակ | Բնակելի անշարժ գույքի վերանորոգում, բարելավում | Բնակելի անշարժ գույքի (գոյություն ունեցող կամ կառուցվող) ձեռքբերում, կառուցապատում |
| Վարկի մարման ժամկետ | 60 - 180 ամիս | 120 - 240 ամիս |
| Վարկերի արժույթ | ՀՀ դրամ | |
| Տարեկան տոկոսադրույք **Ստանդարտ** | 12.0% | 11.0% |
| | Ընկերության աշխատակից՝ 10.5% | Ընկերության աշխատակից՝ 9.5% |
| Տարեկան տոկոսադրույք **ԷԱ** | 11.5% | 10.5% |
| | Ընկերության աշխատակից՝ 10.0% | Ընկերության աշխատակից՝ 9.0% |
| Վարկի գումար **Ստանդարտ** | Մինչև 35'000'000 ՀՀ դրամ | |
| Վարկի գումար **ԷԱ** | Մինչև 45'000'000 ՀՀ դրամ<br>*Վերանորոգման նպատակով տրամադրված ԷԱ վարկերի համար վարկի նվազագույն գումարը կազմում է 3 մլն ՀՀ դրամ* | |
| Մարման եղանակ | 1. Անուիտետ (ամսական հավասարաչափ վճարներ)<br>2. Վարկի գումարի ամսական հավասարաչափ վճարներ<br>*Սեզոնային վճարման ժամանակացույց կարող է սահմանվել միայն գյուղատնտեսական բնույթի եկամուտ ունեցող վարկառուների համար: Ընդ որում, վարկի գումարի մարումների քանակը չի կարող տարեկան 2 անգամից քիչ լինել: Բոլոր դեպքերում, տոկոսների ամսական վճարումը պարտադիր է:* | |
| Տրամադրման վճար | Միանվագ՝ վարկի գումարի 0.8 %-ի չափով (նվազագույնը՝ 30'000 ՀՀ դրամ) | |
| | Ընկերության աշխատակից՝ 0% | |
| Դիմում հայտի ուսումնասիրության վճար | 5'000 ՀՀ դրամ | |
| Կանխավճարի չափ | Ձեռքբերվող անշարժ գույքի գրավադրման դեպքում՝ նվազագույնը անշարժ գույքի ձեռքբերման արժեքի 30%-ի չափով | |

[1] Ձևանմուշներ՝ 0033, 0035, 0053 և 0054; ԷԱ՝ 0075, 0076, 0081 և 0082

| | |
|---|---|
| | Ձեռքբերվող և լրացուցիչ անշարժ գույքի գրավադրման (կամ հիփոթեքային պարտավորության ապահովագրության) դեպքում՝ նվազագույնը անշարժ գույքի ձեռքբերման արժեքի 10%-ի (մինչև 30 տարեկան չամուսնացած շահառուների համար 7.5%, եթե բնակարանը ձեռք է բերվում կառուցապատողից) չափով: |
| Առավելագույն Վարկ/գրավ հարաբերակցություն | ✓ անշարժ գույք(եր)ի գնահատված շուկայական արժեքի 70%-ը<br>✓ ձեռքբերվող և լրացուցիչ անշարժ գույքերի (կամ հիփոթեքային պարտավորության ապահովագրության) գրավադրման դեպքում՝ ձեռքբերվող անշարժ գույքի գնահատված շուկայական/ձեռքբերման արժեքի 90% (մինչև 30 տարեկան չամուսնացած շահառուների համար 92.5%, եթե բնակարանը ձեռք է բերվում կառուցապատողից)<br>✓ ձեռքբերման վարկերի դեպքում գնահատված շուկայական և ձեռքբերման արժեքների տարբերության դեպքում վարկ/գրավ հարաբերակցության համար հիմք է վերցվում նվազագույնը: |
| Ապահովման միջոց | Վերանորոգվող, բարելավվող, ձեռքբերվող (գոյություն ունեցող կամ կառուցվող), կառուցապատվող, անհրաժեշտության դեպքում նաև լրացուցիչ բնակելի անշարժ գույքի գրավ:<br>Կառուցապատման վարկերի դեպքում որպես լրացուցիչ ապահովման միջոց է կարող է հանդիսանալ այլ շարժական/անշարժ գույք: Ցանկացած դեպքում (լրացուցիչ գույքի գրավադրմամբ կամ առանց դրա) վարկը վերաֆինանսավորման ներկայացնելիս վարկ/գրավ հարաբերակցությունը պետք է կազմի առավելագույնը 70% և կառուցվող գույքի հանդեպ նվազագույն պահանջներն են մուտքի դռան, տանիքի և պատուհանների առկայությունը (տեղադրված վիճակում):<br>Կառուցվող բնակելի անշարժ գույքի (կառուցվող բազմաբնակարան շենքում բնակարանի) ձեռք բերման վարկն ապահոված է կառուցապատողի հատուկ հաշվին ԳՖՀ-ի (Կամուրջ ՈւՎԿ ՓԲԸ) կողմից փոխանցված դրամական միջոցների և անշարժ գույքի ձեռք բերման իրավունքի գրավով՝ մինչև կառուցվող շենքում ձեռք բերվող անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումը, որից հետո գրավ է հանդիսանում անշարժ գույքը: Գրավի առարկա դրամական միջոցները պետք է կազմեն վարկի գումարի առնվազն 100%-ը:<br>Հիմնական ապահովման միջոցը պետք է ունենա 100% ավարտվածության աստիճան (բացառությամբ կառուցապատման և կառուցվող բնակելի անշարժ գույքի (կառուցվող բազմաբնակարան շենքում բնակարանի) ձեռք բերման նպատակով տրամադրվող վարկերի, ինչպես նաև կառուցապատման վարկերի):<br>Պարտադիր գրավադրման ենթակա լրացուցիչ անշարժ գույքը ևս պետք է ունենա 100% ավարտվածության աստիճան: |
| Ապահովագրություն | ա) անշարժ գույքի ապահովագրություն՝ վարկի գումարի մնացորդի նկատմամբ՝ համաձայն Ընկերության հետ համագործակցող կազմակերպությունների կողմից սահմանված սակագների և ԾՎՖԿ պահանջների:<br>բ) դժբախտ պատահարներից վարկառուի/համավարկառուների ապահովագրություն՝ վարկի գումարի մնացորդի նկատմամբ՝ համաձայն Ընկերության հետ համագործակցող կազմակերպությունների կողմից սահմանված սակագների և ԾՎՖԿ պահանջների:<br>գ) հիփոթեքային պարտավորության (կանխավճարի մի մասի չափով) ապահովագրություն (առկայության դեպքում)՝ պակաս վճարված կանխավճարի գումարի չափով՝ համաձայն Ընկերության հետ համագործակցող կազմակերպությունների կողմից սահմանված սակագների և ԾՎՖԿ պահանջների: Հիփոթեքային պարտավորության ապահովագրությունը պետք է գործի առնվազն մինչև այն պահը, երբ վարկառուն վարկի գումարից կկատարի Վ/Գ գործակցի 70%-ը գերազանցող գումարի չափով վճարում: |

| | |
|---|---|
| Այլ պայմաններ | ✓ Կառուցապատման վարկերը տրամադրվում են փուլային եղանակով, ընդ որում վերջին փուլը պետք է լինի վարկի գումարի 20%-ից ոչ ավել<br>✓ Կառուցապատման վարկերի դեպքում վարկի վերջին փուլը տրամադրելուց հետո առավելագույնը մեկամյա ժամկետում Հաճախորդը պետք է ամբողջությամբ ապահովի կառուցվող անշարժ գույքի տանիքի, արտաքին դռների և պատուհանների տեղադրումը<br>✓ Կառուցապատման վարկերի դեպքում վարկի գումարը չի կարող գերազանցել կառուցապատման աշխատանքների կատարման նախահաշվի գումարի 80%-ը<br>✓ Կառուցվող բնակելի անշարժ գույքի (կառուցվող բազմաբնակարան շենքում բնակարանի) ձեռք բերման վարկերը տրամադրվում են միանվագ և փոխանցվում են կառուցապատողի հատուկ հաշվին 100% սառեցմամբ<br>✓ Կառուցապատողի և Կապալառու/Շինարարի հանդեպ ներկայացվող պահանջները սահմանված են «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի կողմից հաստատված «Հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման» կարգում<br>✓ Սույն ծրագրի շրջանակներում Համավարկառու (և/կամ սեփականատեր) կարող են հանդիսանալ միայն ընտանիքի անդամները՝ հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, քրոջ, եղբոր ամուսինն ու երեխաները:<br>✓ Ձեռքբերման վարկերի դեպքում անշարժ գույքի ձեռքբերման և գնահատված շուկայական արժեքի առավելագույն չափը կազմում է 55 մլն ՀՀ դրամ:<br>✓ Սույն ծրագրի շրջանակներում Կառուցապատման նպատակով տրամադրվող վարկերի դեպքում կառուցապատվող գույքի սեփականատերերից նվազագույնը մեկ անձ պետք է հանդիսանա Վարկառու կամ Համավարկառու: |
| **ԷԱ չափանիշները** | 1. Ձեռք բերման վարկեր.<br>• Առաջնային շուկայի անշարժ գույք – ԱՀԸ կողմից ընդունելի կազմակերպության շնորհած ԷԱ պիտակ, որի համաձայն շենքի ԷԱ դասը առնվազն B է՝ 2021 թվականի դեկտեմբերի 1-ից հետո կառուցված շենքերի համար, իսկ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 1-ը կառուցված շենքերի համար՝ առնվազն C+:<br>• Երկրորդային շուկայի անշարժ գույք - ԱՀԸ կողմից ընդունելի կազմակերպության շնորհած ԷԱ պիտակ, որի համաձայն շենքի ԷԱ դասն առնվազն C+ է, կամ շենքը ջերմամեկուսացված է:<br>2. Վերանորոգման վարկեր - էներգաարդյունավետ միջոցառումների ընդհանուր ծախսերը կազմում են առնվազն 30%: Էներգաարդյունավետ միջոցառումների հետ ուղղակի կապ չունեցող, լրացուցիչ ծախսերը կարող են ընդգրկվել ԷԱ միջոցառումների ընդհանուր ծախսերի հաշվարկին առավելագույնը վարկի գումարի 10% չափով: Կենցաղային սարքերի չափաբաժինը չի կարող գերազանցել ընդհանուր վարկի գումարի 10%-ը: ԷԱ վերանորոգման վարկերի նախահաշվում ներառված բոլոր էներգաարդյունավետ միջոցառումները պետք է համապատասխանեն ԱՀԸ Հիպոտեկային Վարկերի Վերաֆինանսավորման Կարգով սահմանված նվազագույն տեխնիկական պահանջներին, բացառությամբ այդ պահանջների 1.3 կետով սահմանված ջերմամեկուսիչ նյութերի նվազագույն հաստության պահանջի:<br>3. Կառուցման վարկեր – ԷԱ կառուցման վարկերի դեպքում կառուցվող բնակելի տան պատերի հաստությունը, տանիքի ջերմամեկուսացումը, պատուհանները և ապակեպատ տարածքները և արտաքին դռները պետք է համապատասխանեն ստորև սահմանված նվազագույն տեխնիկական պահանջներին:<br>4. Բնակարանային ԷԱ վերնորոգման և ԷԱ կառուցման վարկերի դեպքում ներկայացվում են նաև լրացված ԷԱ գնահատման գործիքը: |

## 1.2. «ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՎՎԿ ՓԲԸ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ (NMC Սև Ծով)[2]

| Դրույթներ | Պայմաններ | |
|---|---|---|
| Վարկառուներ | ՀՀ քաղաքացի և ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձիք | |
| Վարկի նպատակ | Բնակելի անշարժ գույքի վերանորոգում, բարելավում | Բնակելի անշարժ գույքի (գոյություն ունեցող կամ կառուցվող) ձեռքբերում, կառուցապատում |
| Վարկի մարման ժամկետ | 60 - 180 ամիս | 120 - 240 ամիս |
| Վարկերի արժույթ | ՀՀ դրամ | |
| Տարեկան տոկոսադրույք | 13.5% | 12.5% |
| | Ընկերության աշխատակից՝ 13.0% | Ընկերության աշխատակից՝ 12.0% |
| Վարկի գումար | 35'000'001 - 60'000'000 ՀՀ դրամ | |
| Մարման եղանակ | 1. Անուիտետ (ամսական հավասարաչափ վճարներ)<br>2. Վարկի գումարի ամսական հավասարաչափ վճարներ | |
| Տրամադրման վճար | Միանվագ՝ վարկի գումարի 0.8 %-ի չափով (նվազագույնը՝ 280'000 ՀՀ դրամ) | |
| | Ընկերության աշխատակից՝ 0% | |
| Դիմում հայտի ուսումնասիրության վճար | 5'000 ՀՀ դրամ | |
| Կանխավճարի չափ | Ձեռքբերվող անշարժ գույքի գրավադրման դեպքում՝ նվազագույնը անշարժ գույքի ձեռքբերման արժեքի 30%-ի չափով<br>Ձեռքբերվող և լրացուցիչ անշարժ գույքի գրավադրման (կամ հիփոթեքային պարտավորության ապահովագրության) դեպքում՝ նվազագույնը անշարժ գույքի ձեռքբերման արժեքի 10%-ի չափով: | |
| Առավելագույն Վարկ/գրավ հարաբերակցություն | ✓ անշարժ գույք(եր)ի գնահատված շուկայական արժեքի 70%-ը<br>✓ ձեռքբերվող և լրացուցիչ անշարժ գույքերի (կամ հիփոթեքային պարտավորության ապահովագրության) գրավադրման դեպքում՝ ձեռքբերվող անշարժ գույքի գնահատված շուկայական/ձեռքբերման արժեքի 90%<br>✓ ձեռքբերման վարկերի դեպքում գնահատված շուկայական և ձեռքբերման արժեքների տարբերության դեպքում վարկ/գրավ հարաբերակցության համար հիմք է վերցվում նվազագույնը: | |
| Ապահովման միջոց | Վերանորոգվող, բարելավվող, ձեռքբերվող (գոյություն ունեցող կամ կառուցվող), կառուցապատվող, անհրաժեշտության դեպքում նաև լրացուցիչ բնակելի անշարժ գույքի գրավ:<br>Կառուցապատման վարկերի դեպքում որպես լրացուցիչ ապահովման միջոց է կարող է հանդիսանալ այլ շարժական/անշարժ գույք: Ցանկացած դեպքում (լրացուցիչ գույքի գրավադրմամբ կամ առանց դրա) վարկը վերաֆինանսավորման ներկայացնելիս վարկ/գրավ հարաբերակցությունը պետք է կազմի առավելագույնը 70% և կառուցվող գույքի հանդեպ նվազագույն պահանջներն են մուտքի դռան, տանիքի և պատուհանների առկայությունը (տեղադրված վիճակում):<br>Կառուցվող բնակելի անշարժ գույքի (կառուցվող բազմաբնակարան շենքում բնակարանի) ձեռք բերման վարկն ապահոված է կառուցապատողի հատուկ հաշվին ԳՖՀ-ի (Կամուրջ ՈւՎԿ ՓԲԸ) կողմից փոխանցված դրամական միջոցների և անշարժ գույքի ձեռք բերման իրավունքի գրավով՝ մինչև կառուցվող շենքում | |

[2] Ձևանմուշներ՝ 0033, 0035, 0053, 0054, 0083, 0084, 0085 և 0086

| | |
|---|---|
| | ձեռք բերվող անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումը, որից հետո գրավ է հանդիսանում անշարժ գույքը: Գրավի առարկա դրամական միջոցները պետք է կազմեն վարկի գումարի առնվազն 100%-ը:<br>Հիմնական ապահովման միջոցը պետք է ունենա 100% ավարտվածության աստիճան (բացառությամբ կառուցապատման և կառուցվող բնակելի անշարժ գույքի (կառուցվող բազմաբնակարան շենքում բնակարանի) ձեռք բերման նպատակով տրամադրվող վարկերի, ինչպես նաև կառուցապատման վարկերի):<br><br>Պարտադիր գրավադրման ենթակա լրացուցիչ անշարժ գույքը ևս պետք է ունենա 100% ավարտվածության աստիճան: |
| Ապահովագրություն | ա) անշարժ գույքի ապահովագրություն՝ վարկի գումարի մնացորդի նկատմամբ՝ համաձայն Ընկերության հետ համագործակցող կազմակերպությունների կողմից սահմանված սակագների և ԾՎՖԿ պահանջների:<br>բ) դժբախտ պատահարներից վարակառուի/համավարկառուների ապահովագրություն՝ վարկի գումարի մնացորդի նկատմամբ՝ համաձայն Ընկերության հետ համագործակցող կազմակերպությունների կողմից սահմանված սակագների և ԾՎՖԿ պահանջների:<br>գ) հիփոթեքային պարտավորության (կանխավճարի մի մասի չափով) ապահովագրություն (առկայության դեպքում)՝ պակաս վճարված կանխավճարի գումարի չափով՝ համաձայն Ընկերության հետ համագործակցող կազմակերպությունների կողմից սահմանված սակագների և ԾՎՖԿ պահանջների: Հիփոթեքային պարտավորության ապահովագրությունը պետք է գործի առնվազն մինչև այն պահը, երբ վարկառուն վարկի գումարից կկատարի Վ/Գ գործակցի 70%-ը գերազանցող գումարի չափով վճարում: |
| Այլ պայմաններ | ✓ Կառուցապատման վարկերը տրամադրվում են փուլային եղանակով, ընդ որում վերջին փուլը պետք է լինի վարկի գումարի 20%-ից ոչ ավել<br>✓ Կառուցապատման վարկերի դեպքում վարկի վերջին փուլը տրամադրելուց հետո առավելագույնը մեկամսյա ժամկետում Հաճախորդը պետք է ամբողջությամբ ապահովի կառուցվող անարժ գույքի տանիքի, արտաքին դռների և պատուհանների տեղադրումը<br>✓ Կառուցապատման վարկերի դեպքում վարկի գումարը չի կարող գերազանցել կառուցապատման աշխատանքների կատարման նախահաշվի գումարի 80%-ը<br>✓ Կառուցվող բնակելի անշարժ գույքի (կառուցվող բազմաբնակարան շենքում բնակարանի) ձեռք բերման վարկերը տրամադրվում են միանվագ և փոխանցվում են կառուցապատողի հատուկ հաշվին 100% սառեցմամբ<br>✓ Կառուցապատողի և Կապալառու/Շինարարի հանդեպ ներկայացվող պահանջները սահմանված են «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի կողմից հաստատված «Հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման» կարգում<br>✓ Սույն ծրագրի շրջանակներում Համավարկառու (և/կամ սեփականատեր) կարող են հանդիսանալ միայն ընտանիքի անդամները՝ հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, քրոջ, եղբոր ամուսինն ու երեխաները:<br>✓ Սույն ծրագրի շրջանակներում Կառուցապատման նպատակով տրամադրվող վարկերի դեպքում կառուցապատվող գույքի սեփականատերերից նվազագույնը մեկ անձ պետք է հանդիսանա Վարկառու կամ Համավարկառու: |

| | |
|---|---|
| | ✓ Ձեռք բերվող անշարժ գույքի ձեռքբերման և գնահատված շուկայական արժեքի առավելագույն չափ՝ 90 մլն. ՀՀ դրամ: |

## 1.3. «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԸՆՏԱՆԻՔԻՆ՝ ՄԱՏՉԵԼԻ ԲՆԱԿԱՐԱՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ (HFY)[3]

| Դրույթներ | Պայմաններ | |
|---|---|---|
| Վարկառուներ | ՀՀ քաղաքացի կամ ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձիք | |
| Տարիքային սահմանափակում | ✓ Ամուսինների տարիքային հանրագումար՝ 70<br>✓ Միայնակ ծնողի դեպքում՝ 20-35 | |
| Վարկի նպատակ | Բնակելի անշարժ գույքի (գոյություն ունեցող կամ կառուցվող) ձեռքբերում | |
| Վարկի մարման ժամկետ | 120 - 180 ամիս | |
| Վարկի արժույթ | ՀՀ դրամ | |
| Մարման եղանակ | 1. Անուիտետ (ամսական հավասարաչափ վճարներ)<br>2. Վարկի գումարի ամսական հավասարաչափ վճարներ | |
| Տրամադրման վճար | Միանվագ՝ վարկի գումարի 0.8 %-ի չափով (նվազագույնը՝ 30'000 ՀՀ դրամ) | |
| | Ընկերության աշխատակից՝ 0% | |
| Դիմում հայտի ուսումնասիրության վճար | 5'000 ՀՀ դրամ | |
| | **Առաջնային շուկա**[4] | **Երկրորդային շուկա** |
| Տարեկան տոկոսադրույք | 7.5% | 8.0% |
| | Ընկերության աշխատակից՝ 6.5% | Ընկերության աշխատակից՝ 6.5% |
| Տարեկան տոկոսադրույքի սուբսիդավորում | Նախատեսված չէ | ✓ Երևան քաղաքում անշարժ գույք ձեռք բերելու դեպքում՝ 2%<br>✓ ՀՀ մարզերում անշարժ գույք ձեռք բերելու դեպքում՝ 4% |
| Վարկի գումար | Նվազագույնը՝ 1'000'000 ՀՀ դրամ<br>Առավելագույնը՝ 27'750'000 ՀՀ դրամ | Նվազագույնը՝ 1'000'000 ՀՀ դրամ<br>Առավելագույնը՝ 22'500'000 ՀՀ դրամ |
| Կանխավճարի չափ | Նվազագույնը անշարժ գույքի ձեռքբերման արժեքի 20%-ի չափով<br>Ձեռքբերվող և լրացուցիչ անշարժ գույքի գրավադրման դեպքում՝ նվազագույնը անշարժ գույքի ձեռքբերման արժեքի 7.5%-ի չափով | Նվազագույնը անշարժ գույքի ձեռքբերման արժեքի 30%-ի չափով<br>Ձեռքբերվող և լրացուցիչ անշարժ գույքի գրավադրման դեպքում՝ նվազագույնը անշարժ գույքի ձեռքբերման արժեքի 10%-ի չափով |
| Առավելագույն Վարկ/գրավ հարաբերակցություն | ✓ Ձեռքբերվող անշարժ գույքի գրավադրման դեպքում՝ առավելագույնը ձեռքբերվող անշարժ գույքի գնահատված շուկայական/ձեռքբերման արժեքի 80%<br>✓ Վարկի գումարը կարող է կազմել առավելագույնը գրավի արժեքի 92.5%-ը, եթե առկա է հիփոթեքային պարտավորության ապահովագրություն Վ/Գ գործակցի 80%-ը գերազանցող գումարի | ✓ Ձեռքբերվող անշարժ գույքի գրավադրման դեպքում՝ առավելագույնը ձեռքբերվող անշարժ գույքի գնահատված շուկայական/ձեռքբերման արժեքի 70%<br>✓ Վարկի գումարը կարող է կազմել առավելագույնը գրավի արժեքի 90%-ը, եթե առկա է հիփոթեքային պարտավորության ապահովագրություն Վ/Գ գործակցի 70%-ը գերազանցող գումարի |

[3] Ձևանմուշներ՝ 0041, 0042, 0043 և 0062

[4] Ձևանմուշներ՝ 0114 և 0115

| | | |
|---|---|---|
| | չափով: Հիփոթեքային պարտավորության ապահովագրությունը պետք է գործի առնվազն մինչև այն պահը, երբ վարկառուն վարկի գումարից կկատարի Վ/Գ գործակցի 80%-ը գերազանցող գումարի չափով վճարում:<br>✓ Ձեռքբերվող և լրացուցիչ անշարժ գույքերի գրավադրման դեպքում՝ առավելագույնը ձեռքբերվող անշարժ գույքի շուկայական/ձեռքբերման և լրացուցիչ անշարժ գույքի շուկայական արժեքների հանրագումարի 80%, բայց ոչ ավել, քան ձեռքբերվող անշարժ գույքի գնահատված շուկայական/ձեռքբերման արժեքի 92.5%<br>✓ Գնահատված շուկայական և ձեռքբերման արժեքների տարբերության դեպքում վարկ/գրավ հարաբերակցության համար հիմք է վերցվում առավել փոքր արժեք ունեցողը: | չափով: Հիփոթեքային պարտավորության ապահովագրությունը պետք է գործի առնվազն մինչև այն պահը, երբ վարկառուն վարկի գումարից կկատարի Վ/Գ գործակցի 70%-ը գերազանցող գումարի չափով վճարում:<br>✓ Ձեռքբերվող և լրացուցիչ անշարժ գույքերի գրավադրման դեպքում՝ առավելագույնը ձեռքբերվող անշարժ գույքի շուկայական/ձեռքբերման և լրացուցիչ անշարժ գույքի շուկայական արժեքների հանրագումարի 70%, բայց ոչ ավել, քան ձեռքբերվող անշարժ գույքի գնահատված շուկայական/ձեռքբերման արժեքի 90%<br>✓ Գնահատված շուկայական և ձեռքբերման արժեքների տարբերության դեպքում վարկ/գրավ հարաբերակցության համար հիմք է վերցվում առավել փոքր արժեք ունեցողը: |
| Ապահովման միջոց | Ձեռքբերվող գույքի գրավ, անհրաժեշտության դեպքում նաև լրացուցիչ բնակելի անշարժ գույքի գրավ:<br>Կառուցվող բնակելի անշարժ գույքի (կառուցվող բազմաբնակարան շենքում բնակարանի) ձեռք բերման դեպքում վարկի ապահովության միջոց կարող է հանդիսանալ այլ բնակելի անշարժ գույք և/կամ կառուցվող բնակելի անշարժ գույքի (կառուցվող բազմաբնակարան շենքում բնակարանի) գնման իրավունքը՝ պայմանով, որ ձեռք բերվող անշարժ գույքը գրավադրվելու է 80-100% ավարտվածության աստիճան ստանալուց հետո:<br>Հիմնական ապահովման միջոցը պետք է ունենա նվազագույնը 80% ավարտվածության աստիճան (բացառությամբ կառուցվող բնակելի անշարժ գույքի (կառուցվող բազմաբնակարան շենքում բնակարանի)): Առաջնային շուկայից փուլային վարկի վերջին փուլը պետք է տրամադրվի աշարժ գույքի՝ 80 և ավելի տոկոս ավարտվածության աստիճան ունենալու դեպքում:<br>Պարտադիր գրավադրման ենթակա լրացուցիչ անշարժ գույքը պետք է ունենա 100% ավարտվածության աստիճան: | |
| Ապահովագրություն | ա) անշարժ գույքի ապահովագրություն՝ վարկի գումարի մնացորդի նկատմամբ՝ համաձայն Ընկերության հետ համագործակցող կազմակերպությունների կողմից սահմանված սակագների և ԾՎՖԿ պահանջների:<br>բ) դժբախտ պատահարներից վարկառուի/համավարկառուների ապահովագրություն՝ վարկի գումարի մնացորդի նկատմամբ՝ համաձայն Ընկերության հետ համագործակցող կազմակերպությունների կողմից սահմանված սակագների և ԾՎՖԿ պահանջների: | |

| | |
|---|---|
| | գ) հիփոթեքային պարտավորության (կանխավճարի մի մասի չափով) ապահովագրություն (առկայության դեպքում)՝ պակաս վճարված կանխավճարի գումարի չափով՝ համաձայն Ընկերության հետ համագործակցող կազմակերպությունների կողմից սահմանված սակագների և ԾՎՖԿ պահանջների: |
| Այլ պայմաններ | ✓ Առաջնային շուկայից ձեռք բերվող գույքի ձեռքբերման արժեքը կարող է կազմել առավելագույնը 30'000'000 ՀՀ դրամ, իսկ ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ի կողմից հրապարակվող տեղեկատվության համաձայն՝ 31'000'000 ՀՀ դրամ,<br>✓ Երկրորդային շուկայից ձեռք բերվող գույքի ձեռքբերման արժեքը կարող է կազմել առավելագույնը 25'000'000 ՀՀ դրամ, իսկ ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ի կողմից հրապարակվող տեղեկատվության համաձայն՝ 26'000'000 ՀՀ դրամ,<br>✓ Տվյալ ծրագրով անձը կարող է վարկավորվել մեկ անգամ,<br>✓ Կառուցվող բնակելի անշարժ գույքի (կառուցվող բազմաբնակարան շենքում բնակարանի) ձեռք բերման նպատակով տրամադրվող վարկերը տրամադրվում են փուլային եղանակով<br>✓ Կառուցվող բնակելի անշարժ գույքի (կառուցվող բազմաբնակարան շենքում բնակարանի) ձեռք դեպքում վարկի գումարը փոխանցվում է կառուցապատողի հատուկ հաշվին և ամբողջությամբ սառեցվում է, եթե այլ բան սահմանված չէ ՎԿ որոշմամբ<br>✓ Սույն ծրագրի շրջանակներում Համավարկառու կարող են հանդիսանալ միայն ընտանիքի անդամները՝ հայրը, մայրը, քույրը, եղբայրը, ամուսին, ամուսնու ծնողները, քույրը և եղբայրը: |

## 1.4. ՍԵՓԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐՈՎ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ[5]

| Դրույթներ | Պայմաններ | |
|---|---|---|
| Վարկառուներ | ՀՀ քաղաքացի և ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձիք | |
| Վարկի նպատակ[6] | Անշարժ գույքի վերանորոգում, բարելավում | Անշարժ գույքի (գոյություն ունեցող կամ կառուցվող) ձեռքբերում, կառուցապատում |
| Վարկի մարման ժամկետ | 18 - 84 ամիս | 18 - 120 ամիս |
| Վարկերի արժույթ | ՀՀ դրամ | |
| Տարեկան տոկոսադրույք | 16.5% | 15.5% |
| | Ընկերության աշխատակից՝ 15.0% | Ընկերության աշխատակից՝ 14.0% |
| Վարկի գումար | Նվազագույնը՝ 3'000'000 ՀՀ դրամ<br>Առավելագույնը՝ 45'000'000 ՀՀ դրամ | |
| Մարման եղանակ | 1. Անուիտետ (ամսական հավասարաչափ վճարներ)<br>2. Վարկի գումարի ամսական հավասարաչափ վճարներ | |
| Տրամադրման վճար | Միանվագ՝ վարկի գումարի 1.5 %-ի չափով (նվազագույնը՝ 45'000 ՀՀ դրամ) | |
| | Ընկերության աշխատակից՝ 0% | |
| Դիմում հայտի ուսումնասիրության վճար | 5'000 ՀՀ դրամ | |
| Կանխավճարի չափ | Ձեռքբերվող անշարժ գույքի գրավադրման դեպքում՝ նվազագույնը անշարժ գույքի ձեռքբերման արժեքի 30%-ի չափով<br>Ձեռքբերվող և լրացուցիչ անշարժ գույքի գրավադրման դեպքում՝ նվազագույնը անշարժ գույքի ձեռքբերման արժեքի 10%-ի չափով | |
| Առավելագույն Վարկ/գրավ հարաբերակցություն | ✓ վերանորոգվող անշարժ գույքի գնահատված շուկայական արժեքի 70%-ը<br>✓ ձեռքբերվող անշարժ գույքի գրավադրման դեպքում՝ առավելագույնը ձեռքբերվող անշարժ գույքի գնահատված շուկայական/ձեռքբերման արժեքի 70%<br>✓ ձեռքբերվող և լրացուցիչ անշարժ գույքերի գրավադրման դեպքում՝ առավելագույնը ձեռքբերվող անշարժ գույքի գնահատված շուկայական/ձեռքբերման և լրացուցիչ անշարժ գույքի շուկայական արժեքների հանրագումարի 70%, բայց ոչ ավել, քան ձեռքբերվող անշարժ գույքի գնահատված շուկայական/ձեռքբերման արժեքի 90%<br>✓ ձեռքբերման վարկերի դեպքում գնահատված շուկայական և ձեռքբերման արժեքների տարբերության դեպքում վարկ/գրավ հարաբերակցության համար հիմք է վերցվում նվազագույնը:<br>✓ կառուցվող և լրացուցիչ անշարժ գույքերի գնահատված շուկայական արժեքների հանրագումարի 70% | |
| Ապահովման միջոց | Վերանորոգվող, բարելավվող, ձեռքբերվող (գոյություն ունեցող կամ կառուցվող), կառուցապատվող, անհրաժեշտության դեպքում նաև լրացուցիչ անշարժ գույքի գրավ:<br>Կառուցապատման վարկերի դեպքում որպես լրացուցիչ ապահովման միջոց է կարող է հանդիսանալ այլ շարժական/անշարժ գույք: Ցանկացած դեպքում (լրացուցիչ գույքի գրավադրմամբ կամ առանց դրա) վարկի վերջին փուլը | |

[5] Ձևանմուշներ՝ 0073, 0109, 0110, 0111, 0112, 0120 և 0129

[6] Վարկատեսակի շրջանակներում թույլատրվում է այլ ֆինանսական կառույցների կողմից նշված նպատակով տրամադրված վարկերի վերաֆինանսավորումը:

| | |
|---|---|
| | տրամադրելուց առաջ վարկ/գրավ հարաբերակցությունը պետք է կազմի առավելագույնը 70%՝ ներառյալ վերջին փուլով տրամադրվելիք գումարը:<br>Կառուցվող անշարժ գույքի (կառուցվող բազմաբնակարան շենքում անշարժ գույքի) ձեռք բերման դեպքում վարկի ապահովության միջոց կարող է հանդիսանալ այլ անշարժ գույք և/կամ կառուցվող բնակելի անշարժ գույքի (կառուցվող բազմաբնակարան շենքում անշարժ գույքի) գնման իրավունքը՝ պայմանով, որ ձեռք բերվող անշարժ գույքը գրավադրվելու է 100% ավարտվածության աստիճան ստանալուց հետո:<br>Հիմնական ապահովման միջոցը պետք է ունենա 100% ավարտվածության աստիճան (բացառությամբ կառուցապատման և կառուցվող բնակելի անշարժ գույքի (կառուցվող բազմաբնակարան շենքում անշարժ գույքի) ձեռք բերման նպատակով տրամադրվող վարկերի, ինչպես նաև կառուցապատման վարկերի):<br>Պարտադիր գրավադրման ենթակա լրացուցիչ անշարժ գույքը ևս պետք է ունենա 100% ավարտվածության աստիճան: |
| Այլ պայմաններ | ✓ Կառուցապատման վարկերը տրամադրվում են փուլային եղանակով, ընդ որում վերջին փուլը պետք է լինի վարկի գումարի 20%-ից ոչ ավել<br>✓ Կառուցապատման վարկերի դեպքում վարկի գումարը չի կարող գերազանցել կառուցապատման աշխատանքների կատարման նախահաշվի գումարի 80%-ը<br>✓ Կառուցվող անշարժ գույքի (կառուցվող բազմաբնակարան շենքում անշարժ գույքի) ձեռք բերման նպատակով տրամադրվող վարկերը տրամադրվում են փուլային եղանակով<br>✓ Կառուցվող անշարժ գույքի (կառուցվող բազմաբնակարան շենքում անշարժ գույքի) ձեռք դեպքում վարկի գումարը փոխանցվում է կառուցապատողի հատուկ հաշվին և ամբողջությամբ սառեցվում է, եթե այլ բան սահմանված չէ ՎԿ որոշմամբ |

## 1.5. ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԷԱ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՎՈՂ ԾՐԱԳԻՐ«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՎՎԿ ՓԲԸ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ[7]

**(գործում է մինչև՝ 01/07/2023թ.)**

| Դրույթներ | Պայմաններ |
|---|---|
| Վարկառուներ | ՀՀ քաղաքացի և ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձիք |
| Վարկի նպատակ | Բնակելի անշարժ գույքի վերանորոգում, բարելավում |
| Վարկի մարման ժամկետ | 84 ամիս |
| Վարկերի արժույթ | ՀՀ դրամ |
| Տարեկան տոկոսադրույք | 12.0%<br>Փաստացի տոկոսադրույքը չի կարող գերազանցել 14%-ը, հակառակ դեպքում վարկի անվանական տոկոսադրույքը ենթակա է նվազեցման, սակայն ոչ պակաս քան 11.5%: |
| Տարեկան տոկոսադրույքի սուբսիդավորում | Վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորումը կիրականացվի այնպիսի չափաքանակով, որպեսզի վարկերը շահառուներին տրամադրվեն.<br>✓ Սահմանամերձ կամ բարձր լեռնային բնակավայրերում՝ 0% տոկոսադրույքով<br>✓ Սահմանամերձ բնակավայր չհանդիսացող գյուղական բնակավայրերում՝ 2% տոկոսադրույքով<br>✓ Սահմանամերձ բնակավայր չհանդիսացող քաղաքային բնակավայրերում՝ 3% տոկոսադրույքով<br>✓ Երևան քաղաքում՝ 5% տոկոսադրույքով |
| Վարկի գումար | Բազմաբնակարան շենքի բնակարանի վերանորոգման համար առավելագույնը 7'000'000 ՀՀ դրամ<br>Անհատական բնակելի տան վերանորոգման համար առավելագույնը 10'000'000 ՀՀ դրամ<br>Նվազագույնը ՝ 3'000'000 ՀՀ դրամ |
| Մարման եղանակ | 3. Անուիտետ (ամսական հավասարաչափ վճարներ)<br>4. Վարկի գումարի ամսական հավասարաչափ վճարներ |
| Տրամադրման վճար | 0 |
| Դիմում հայտի ուսումնասիրության վճար | 0 |
| Առավելագույն Վարկ/գրավ հարաբերակցություն | Անշարժ գույք(եր)ի գնահատված շուկայական արժեքի 70%-ը |
| Ապահովման միջոց | Վերանորոգվող, բարելավվող, անհրաժեշտության դեպքում նաև լրացուցիչ բնակելի անշարժ գույքի գրավ:<br>Հիմնական ապահովման միջոցը պետք է ունենա 100% ավարտվածության աստիճան: |
| Ապահովագրություն | ա) անշարժ գույքի ապահովագրություն՝ վարկի գումարի մնացորդի նկատմամբ՝ համաձայն Ընկերության հետ համագործակցող կազմակերպությունների կողմից սահմանված սակագների և ԾՎՖԿ պահանջների:<br>բ) դժբախտ պատահարներից վարակառուի/համավարկառուների ապահովագրություն՝ վարկի գումարի մնացորդի նկատմամբ՝ համաձայն |

[7] Ձևանմուշներ՝ 0134, 0135, 0136, 0137

| | |
|---|---|
| | Ընկերության հետ համագործակցող կազմակերպությունների կողմից սահմանված սակագների և ԾՎՖԿ պահանջների: |
| Այլ պայմաններ | ✓ Սույն ծրագրի շրջանակներում Համավարկառու (և/կամ սեփականատեր) կարող են հանդիսանալ միայն ընտանիքի անդամները՝ հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, թոռները:<br>✓ Մեկ բնակարանի (բնակելի տան) համար ծրագրի շրջանակներում իրականացվում է միայն մեկ վարկի տոկոսադրույքի սուբսիդավորում:<br>✓ Մինչև 2010 թվականը կառուցված բնակարանի կամ բնակելի տան համար տեխնիկական վիճակի հետազննության փաստաթուղթ (4-րդ աստիճանի վնասվածություն չունենալու վերաբերյալ) կամ գնահատող կազմակերպության կողմից տրված գնահատման հաշվետվություն, որը ներառում է գնահատվող գույքի տեխնիկական վիճակի (վնասվածության աստիճանի) վերաբերյալ տեղեկատվություն |
| ԷԱ չափանիշներ | ✓ Էներգաարդյունավետ միջոցառումների ընդհանուր ծախսերը պետք է կազմեն վարկի ընդհանուր գումարի առնվազն 20%-ը բնակարանի վերանորոգման դեպքում, 30%-ը՝ անհատական բնակելի տան դեպքում:<br>✓ Վարկի ընդհանուր գումարի ոչ ավելի, քան 10%-ը կարող է ուղղվել կենցաղային տեխնիկայի (առնվազն էներգախնայողության A+ դասի սառնարան, լվացքի մեքենա, սպասք լվացող մեքենա, էլեկտրական ջեռոց, էլեկտրական սալօջախ, էլեկտրական ջրատաքացուցիչ) ձեռքբերմանը:<br>✓ Վարկի օգտագործումը թույլատրելի ծախսային ուղղություններով իրականացվում է անկանխիկ եղանակով՝ վարկի ընդհանուր գումարի առնվազն 70%-ի չափով:<br>✓ Վարկի ծախսային ուղղությունների 80%-ը և էներգաարդյունավետ միջոցառումների ուղղվող ծախսերի 100%-ը պետք է հիմնավորվեն վճարումը հավաստող փաստաթղթերով (վճարման հանձնարարական, ՀԴՄ կտրոն, հաշիվ-ապրանքագրերով վճարում, բանկային կամ քարտային փոխանցում, ապրանքի կամ աշխատանքի կամ ծառայության ընդունման-հանձման փաստը հավաստող փաստաթուղթ՝ փոխադարձ ակտ, արձանագրություն և այլն): |

## 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՐԱՎՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

### 2.1 ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ[8]

| Դրույթներ | Պայմաններ |
|---|---|
| Վարկառուներ | ՀՀ քաղաքացի և ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձիք |
| Վարկի նպատակ | Բացառապես անձնական, ընտանեկան տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված, ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) պատվիրում կամ ձեռքբերում |
| Վարկի մարման ժամկետ | 84 ամիս |
| Վարկի արժույթ | ՀՀ դրամ |
| Տարեկան տոկոսադրույք | 17 % |
| | Ընկերության աշխատակից՝ 15% |
| Վարկի գումար | Առաջին գոտի՝ 2'000'000 – 15'000'000 ՀՀ դրամ<br>Երկրորդ գոտի՝ 2'000'000 – 10'000'000 ՀՀ դրամ |
| Մարման եղանակ | 1. Անուիտետ (ամսական հավասարաչափ վճարներ)<br>2. Վարկի գումարի ամսական հավասարաչափ վճարներ |
| Տրամադրման վճար | Միանվագ՝ վարկի գումարի 1.5 %-ի չափով (նվազագույնը՝ 30'000 ՀՀ դրամ) |
| | Ընկերության աշխատակից՝ 0% |
| Դիմում հայտի ուսումնասիրության վճար | 5'000 ՀՀ դրամ |
| Առավելագույն Վարկ/գրավ հարաբերակցություն | 1. Անշարժ գույք՝ Առաջին գոտի – շուկայական արժեքի 60%<br>2. Անշարժ գույք՝ Երկրորդ գոտի – շուկայական արժեքի 50% |
| Ապահովման միջոց | Անշարժ գույք |
| Առաջին գոտի | ք. Երևան, բացառությամբ հետևյալ հասցեների՝<br>- Սարի թաղի բոլոր փողոցները և շարքերը,<br>- Որմնադիրների փողոց,<br>- Գլինկայի փողոց (Խորենացի փողոցի հետ հատումից մինչև Սարի թաղ),<br>- Կոնդի փողոց,<br>- Սեմյոն Երևանցու փողոց,<br>- Ռուսթավելու փողոց,<br>- Ֆրիկի փողոցի հին շենքեր,<br>- Կոզեռնի փողոց,<br>- Սուրբ Հովհաննեսի փողոց,<br>- Նորագյուղ թաղամաս,<br>- Թաիրովի փողոց,<br>- Էջմիածնի հին խճուղի,<br>- Շենգավիթ վարչական շրջանում գտնվող Խարբերդի ամառանոցներ թաղամասում |
| Երկրորդ գոտի | Բոլոր այն տարածքները, որոնք չեն մտնում առաջին գոտու մեջ |

[8] Ձևանմուշ 0047; նոր ձևանմուշ՝ աշխատակից

## 2.2 ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ ՉՊԱՀԱՆՋՈՂ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ[9]

| Դրույթներ | Պայմաններ |
|---|---|
| Վարկառուներ | ՀՀ քաղաքացի և ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձիք |
| Վարկի նպատակ | Բացառապես անձնական, ընտանեկան տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված, ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) պատվիրում կամ ձեռքբերում |
| Վարկի մարման ժամկետ | 84 ամիս |
| Վարկի արժույթ | ՀՀ դրամ |
| Տարեկան տոկոսադրույք | 18.5 % |
| Վարկի գումար | Առաջին գոտի՝ 2'000'000 - 15'000'000 ՀՀ դրամ<br>Երկրորդ գոտի՝ 2'000'000 - 10'000'000 ՀՀ դրամ |
| Մարման եղանակ | 1. Անուիտետ (ամսական հավասարաչափ վճարներ)<br>2. Վարկի գումարի ամսական հավասարաչափ վճարներ |
| Տրամադրման վճար | Միանվագ՝ վարկի գումարի 1.5 %-ի չափով (նվազագույնը՝ 45'000 ՀՀ դրամ) |
| Դիմում հայտի ուսումնասիրության վճար | 5'000 ՀՀ դրամ |
| Առավելագույն Վարկ/գրավ հարաբերակցություն | 1. Անշարժ գույք՝ Առաջին գոտի – շուկայական արժեքի 50%<br>2. Անշարժ գույք՝ Երկրորդ գոտի – շուկայական արժեքի 40% |
| Ապահովման միջոց | Անշարժ գույք |
| Ապահովագրություն | Ապահովագրությունը կատարվում է ըստ անհրաժեշտության:<br>Ապահովագրության ծախսերը կատարվում են վարկառուի կողմից՝ համաձայն ապահովագրական ընկերությունների սակագների: |
